600.0472.01.11.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 նոյեմբերի 2017 թվականի №472Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի №295Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ «Կ.Ա.Մ.Է.» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) որ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) 2009 թվականի հունիսի 17-ի №295Ա որոշմամբ «Կ.Ա.Մ.Է.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) տրամադրվել է ռադիոհաճախականության օգտագործման №0576 թույլտվությունը (այսուհետ՝ №0576 թույլտվություն),

բ) հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 29-ի №368Ա որոշումը, որով ընկերությանը պարտավորեցվել է մինչև 2016 թվականի նոյեմբերի 29-ն ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով հաշվարկված 560 400 (հինգ հարյուր վաթսուն հազար չորս հարյուր) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

գ) որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 19-ի վճռով ընկերությունը սնանկ է ճանաչվել, իսկ նույն դատարանի 2017 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ ընկերության նկատմամբ սկսվել է լուծարման վարույթ,

դ) ընկերության սնանկության գործով կառավարչի 2017 թվականի հոկտեմբերի 12-ի (հանձնաժողովում մուտքագրվել է հոկտեմբերի 16-ին)՝ ընկերությանը տրամադրված №0576 թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ գրությունը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1 հոդվածը, «Սնանկության

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, 47-րդ հոդվածի 3-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 78-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ հանձնաժողովը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել հանձնաժողովի 2009 թվականի հունիսի 17-ի «Կ.Ա.Մ.Է.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №295Ա որոշումը:
2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում 900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով 2016 թվականի նոյեմբերի 29-ից մինչև 2017 թվականի հոկտեմբերի 16-ը հաշվարկված 213 852 (երկու հարյուր տասներեք հազար ութ հարյուր հիսուներկու) դրամ պարտքը:
3. Ընդունել ի գիտություն, որ ընկերությունն իրավասու է՝
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի, որն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հոկտեմբերի 16-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
1 նոյեմբերի 2017թ.